



Որպես Մակեդոնիայի Ֆուտբոլի Ֆեդերացիայի Արտոնագրման մենեջերի տեղակալ՝ ես ներգրավված եմ այս նախագծում դեռ սկզբնական փուլից՝ 2002թ-ի նոյեմբերից, երբ կազմվեց 1-ին «կանոնագիրքը» ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին մասնակցող ակումբների համար:

Մեր Գործկումի, իսկ այնուհետև նաև ՈՒԵՖԱ-ի կողմից այդ Ուղեցույցի հաստատումից հետո կազմակերպվեց նախագծի ճանաչողական սեմինար-ներկայացում ակումբների, տեղական եւ պետական պաշտոնական մարմինների, հովանավորների, ԶԼՄ-ների ներկայացուցիչների եւ հասարակության համար: Այդ ներկայացման ժամանակ մենք պարզորոշ նկատեցինք նրանց վախը, վախն անհայտի առջև: Մենք ստացանք բավական բացասական արձագանք դրա վերաբերյալ, մասնավորապես որ «աշխատանքը անհնար է կատարել», որ դա հնարավոր չէ մեր երկրում, և որ դա մեր հասկացությունից վեր է:

Ստացված տեղեկատվության վերազնահատումից հետո մենք կայացրեցինք որոշում՝ անցկացնել արտոնագրման փորձաշրջան այն ակումբների համար, որոնք կցանկանային անցնել արտոնագրումն առանց որեւէ տեսակի կարգապահական միջոցների: Այդ աշխատանքները տարվեցին ՈՒԵՖԱ-ի 2003/2004թթ-երի մրցաշրջանի համար, եւ 12 ակումբներից միայն 3-ը մասնակցեցին դրան: Արձանագրված արդյունքներն եղան ավելի սարսափելի, քան մենք ակնկալում էինք:

Հենց այդ պատճառով կայացվեց ուսումնա-մեթոդական դասընթացների անցկացման եւ արտոնագրման թեկնածու-ակումբների թվի աճի վերաբերյալ որոշում: Առաջին հերթին մենք անցկացրեցինք բազմաթիվ սեմինարներ եւ խորհրդակցություններ, որոնք նպատակ ունեին նախապատրաստել ակումբներին իրենց 1-ին պաշտոնական մրցաշրջանի համար (ՈՒԵՖԱ-ի 2004/2005թթ-երի մրցաշրջան): Արդյունքներն այս անգամ ավելի գոհացուցիչ էին. արդեն 12 ակումբներից 6-ը դիմեցին արտոնագրերի համար եւ բոլորն էլ արժանացան դրանց: Հետագայում ավելի ու ավելի շատ ակումբներ, ինչպես նաև ԶԼՄ-ներ եւ հասարակությունը սկսեցին գիտակցել այս աշխատող համակարգի առավելությունները: Նրանք ընկալեցին այն պարզ ճշմարտությունը, որ մրցաշարային աղյուսակում առաջինը լինելը և միայն մարզական չափանիշները բավարար չեն որակավորվելու համար:

Մակեդոնիայի Ֆուտբոլի Ֆեդերացիան իր Արտոնագրման բաժնի միջոցով պատասխանատու էր ակումբների արտոնագրման համակարգի կիրառման եւ ընթացքի համար: 2 անգամ մենք արժանացանք SGS ընկերության կողմից շնորհվող հավաստագրին՝ ՈՒԵՖԱ-ի Ստանդարտին համապատասխանելիությունն ապահովելու համար: Ընդ որում, այդ Ստանդարտը հիմնված է ISO-9001:2000 միջազգային ստանդարտի վրա: Հեշտ չէր արժանանալ այդ հավաստագրերին, ինչպես նաև ապահովել համապատասխանելիությունը դրան 6 տարվա ընթացքում: Այն պահանջում էր ֆեդերացիայի ղեկավարության լիակատար օժանդակությունը, խնդիրների եւ նպատակների հստակ սահմանումը՝ անկախություն եւ գաղտնապահություն, պլանավորում եւ իրականացում, գնահատում ու վերլուծություն եւ այլն:

Ակումբների արտոնագրման համակարգի եւ դրված խնդիրների կիրառմամբ մենք հասանք՝

- ակումբային ենթակառուցվածքների մի մասի բարելավմանն ու տեղայնացմանը,
- կազմակերպչական եւ կառավարման համակարգի բարելավմանը,
- ակումբների տնտեսական եւ ֆինանսական հնարավորությունների բարելավմանը՝ ամրապնդելով թափանցիկությունն ու ապահովությունը,
- Մակեդոնիայի ֆուտբոլի բոլոր բաղադրամասերի շարունակական բարելավմանը՝ նախապատվություն տալով որակյալ կրթության եւ ակումբների մանկապատանեկան սեկտորի բնագավառներին:

Ցավոք, մինչ օրս ակումբների արտոնագրման համակարգը կիրառվում էր միայն այն ակումբների նկատմամբ, որոնք մասնակցում էին ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին: Սկսած ընթացիկ մրցաշրջանից՝ մենք իրականացնում ենք նախապատրաստական աշխատանքներ՝ հաջորդ տարվանից արտոնագրումն «ազգային» մակարդակով կիրառելու նպատակով, ինչը մեզ համար հանդիսանում է որոշիչ քայլ մակեդոնական ֆուտբոլի մակարդակի բարելավմանն ուղղված խնդիրների իրականացման հարցում:

Ֆիլիպ Պոպովսկի
Արտոնագրման մենեջերի տեղակալ
Մակեդոնիայի ֆուտբոլի Ֆեդերացիա